

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՆ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անի Դանիելյան

*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Կալանավորման պայմանների շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում անձին որպես մեղադրյալ ներգրաված լինելու և հանցանք կատարելու հիմնավոր կասկածի հարաբերակցության ու դրանց գնահատման հետ կապված հարցերը: Այսպես, այդ հասկացության վերաբերյալ Եվրոպական դատարանի որոշումների համաձայն՝ «հիմնավոր կասկած» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է՝ կատարած լինել **հանցանքը**¹: Ինչ վերաբերում է անձին որպես մեղադրյալ ներգրավելուն, ապա Օրենսգրքով դրա համար պահանջվում է անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցություն:

Վերոհիշյալ սահմանումներից ակներև է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու և հանցանք կատարելու հիմնավոր կասկածի համար պահանջվում են անձի կողմից հանցանքի կատարման կասկածների տարբեր աստիճաններ. առաջինի դեպքում անհրաժեշտ է կասկածի այնպիսի աստիճան, որը ենթադրում է անձի կողմից հանցանքի կատարման բարձր հավանականության մասին և հիմնավորվում է **բավարար ապացույցների համակցությամբ**, իսկ երկրորդը՝ հավանականության ավելի ցածր աստիճան և հիմնավորվում ցանկացած փաստերով ու տեղեկություններով: Քննարկվող կասկածների աստիճանների տարբերությունը և դրանց հարաբերակցության հիշյալ բովանդակությունը արձանագրվել են նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ պարտադիր չէ, որ հիմնավոր կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ *նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու* համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում³:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե ինչ նպատակով է իրավակիրառ պրակտիկայում և տեսությունում որպես մեղադրյալ ներգրաված լինելու հետ մեկտեղ կալանավորման պայմանների շարքում նշվում նաև հիմնավոր կասկածի առկայությունը, և ի վերջո, կասկածի ինչպիսի աստիճան պետք է հիմք ընդունի դատարանը:

¹ Տե՛ս Fox, Campbell and Hartley v. The United Kingdom գործով Մեծ պալատի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

² Ընդ որում, որոշումների մեծամասնությունում, այդ թվում սկզբնական որոշումներում, Եվրոպական դատարանը «հանցանք» եզրույթն օգտագործում է որոշիչ՝ «ը» հոդով, իսկ երբեմն՝ անորոշ՝ սակայն միևնույն ժամանակ հղում կատարելով այն որոշումներին, որոնցում օգտագործված է որոշյալ առումով: Ընդ որում, նույն որոշումների ֆրանսերեն տեքստում նման հակասություն առկա չէ: Բոլորում հանցանք բառն օգտագործվում է որոշիչ հոդով:

³ Տե՛ս, օրինակ, Murray v. The United Kingdom գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ 14310/88, կետ 55:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ, օրինակ, ԱՄՆ-ում անձի կալանավորման պայման է «հավանական պատճառը» («probable cause»), որպիսի եզրույթը նշվում է ԱՄՆ Սահմանադրության 4-րդ փոփոխության տեքստում: Այն ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի տիրապետության տակ առկա այնպիսի փաստերի, հանգամանքների և ողջամտորեն վստահելի տեղեկատվության առկայություն, որը բավարար է ողջամիտ խոհեմության տեր անձին համոզելու, որ հանցանքը կատարվել է¹: Ընդ որում, ԱՄՆ ապացուցողական իրավունքում ևս առկա է հանցանքի կատարման հիմնավոր կասկածի հասկացությունը, որը սաղմնային և չորոշակիացված կասկածից կամ ինտուիտիվ կանխազգացումից բարձր, սակայն հիմնավոր պատճառից ցածր կասկածի աստիճան է, որը ենթադրում է որոշակի, հստակ և անձնավորված փաստերի առկայություն հանցանքի կատարման հնարավորության վերաբերյալ և կիրառվում որպես անձանց կանգնեցնելու ու խուզարկելու (stop and frisk) գործողությունների պայման²: Հետաքրքրական է նաև, որ հավանական պատճառը անձին մեղադրանք առաջադրելու նախապայման է³:

Անգլիայի օրենսդրությամբ անձին կալանավորելու համար անհրաժեշտ է *հիմնավոր հավատի* առկայություն, որ անձը հանցանք է կատարել⁴: **Իտալիայի** օրենսդրությամբ պահանջվում է «մեղավորության մասին լուրջ մատնանշումներ» դա նշանակում է անձի մեղավորության հավանականություն, որը ցածր է դատապարտման համար անհրաժեշտ աստիճանից⁵, **Գերմանիայում** հանցանքի կատարման մեջ «լուրջ կասկած», որը ենթադրում է անձի կողմից հանցանքի կատարման բարձր հավանականություն և ենթադրում կասկածի ավելի բարձր աստիճան, քան անհրաժեշտ է մեղադրական ակտի համար⁶:

ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N41 որոշման համաձայն կալանավորման պայման է հանդիսանում հիմնավոր կասկածը, որը ենթադրում է տվյալների առկայություն այն մասին, որ անձն առնչություն ունի տեղի ունեցած հանցանքին (բռնվել է հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո, տուժողը կամ ականատեսները մատնանշում են տվյալ անձին որպես հանցանքը կատարողի, տվյալ անձի կամ նրա հազուստի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում հայտնաբերվել են հանցանքի բացահայտ հետքեր և այլ)⁷: Վկայակոչված դիրքորոշումներից ակնհայտ է, որ ՌԴ օրենսդրության պայմաններում խոսքը ձեռքբերված համար անհրաժեշտ կասկածի աստիճանի մասին է: Ընդ որում, ՌԴ օրենսդրությամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելի է ինչպես կասկածյալի, այնպես էլ մեղադրյալի նկատմամբ:

¹ Տե՛ս ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումը՝ *Brinegar v. United States*, 338 U.S. 160, 173 (1949):

² Տե՛ս *Ornelas v. United States*, 517 U.S., 690, *United States v. Cortez*, 449 U.S. 411, 417-18 (1981), *United States v. Sokolow*, 490 U.S. 1, 7 (1989), *United States v. Arvizu*, 534 U.S. 266, 273 (2002):

³ Տե՛ս **Arenella Peter**. Reforming the Federal Grand Jury and the State Preliminary Hearing to Prevent Conviction without Adjudication. *Michigan Law Review*. 78(4), February 1980, էջ 478:

⁴ Տե՛ս *Pre-trial Detention in 20th and 21st Century Common Law and Civil Law Systems*, Edited by Marion Charret-Del Bove and Fabrice Mourlon. Cambridge Scholars Publishing, 2014, էջ 17:

⁵ Տե՛ս *Pre-Trial Detention in the European Union, An Analysis of Minimum Standards in Pre-trial Detention and the Grounds for Regular Review in the Member States of the EU* (JLS/D3/2007/01), Italy, էջ 12, հասանելի է <http://www.ecba.org/extdocserv/projects/JusticeForum/Italy180309.pdf>

⁶ Տե՛ս նույն տեղում, Germany, էջ 15, հետևյալ հղմամբ. <http://www.ecba.org/extdocserv/projects/JusticeForum/Germany180309.pdf>

⁷ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N41 որոշման 2-րդ կետը:

Միջազգային քրեական դատարանի ստատուտի (Հռոմի ստատուտ) 58-րդ հոդվածը անձի կալանավորման համար պահանջում է *հիմնավոր հիմքերի* առկայություն՝ հավատարմի, որ անձը կատարել է համապատասխան հանցանքը: Վերջինս Միջազգային քրեական դատարանի կողմից մեկնաբանվել է որպես ոչ թե նյութերից բխող միակ ողջամիտ եզրահանգում, այլ այդպիսի հնարավոր եզրահանգումներից մեկը¹: Ընդ որում, հաշվի առնելով, որ անձին կալանավորելու թույլտվության փուլը կապված է մեղադրանք առաջադրելու հետ, Հռոմի ստատուտում օգտագործող կասկածի աստիճանն ավելի բարձր է, քան Կոնվենցիայի իմաստով «հիմնավոր կասկած» որակավորումը, չնայած այն հանգամանքին, որ Միջազգային քրեական դատարանն իր մի շարք որոշումներում հղում է կատարում և հիմնվում է հիմնավոր կասկածի կապակցությամբ Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշներին²:

Վերոհիշյալից հետևում է, որ երկրների մի մասում, այդ թվում՝ ՀՀ-ում, կալանավորման համար պահանջվում է հիմնավոր կասկածից բարձր կասկածի աստիճան: Ընդ որում որոշ երկրներում հիմնավոր կասկածից բարձր կասկածի աստիճան է պահանջվում ոչ միայն դատարանի կողմից կալանավորման թույլտվություն տալու, այլ նաև դրան նախորդող՝ անձին կարճաժամկետ ազատությունից զրկելու (դա որոշ երկրների մի մասում կարող է անվանվել ձերբակալում) դեպքերում: ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունից հետևում է, որ հիմնավոր կասկածի պահանջը ըստ էության վերաբերելի է ձերբակալմանը, այլ ոչ կալանավորմանը: Հետևաբար դրա առկայության գնահատումը պետք է կատարվի ձերբակալման իրավաչափությունը գնահատելիս: Ինչ վերաբերում է կալանքի միջնորդությունների քննությանը, ապա սրա շրջանակներում պետք է գնահատվի անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար հիմքերի առկայությունը, այսինքն՝ *«հիմնավոր հիմքերի առկայությունը՝ հավատարմի, որ անձը հանցանք է կատարել»*: Վերջինս հիմնավոր կասկածի համեմատությամբ կասկածի ավելի բարձր աստիճան է և համահավասար է անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ կասկածին:

Վերոհիշյալ վերլուծությունից ելնելով՝ կարծում ենք, որ ընդունելի չէ մեղադրանքի առկայության հետ մեկտեղ «հիմնավոր կասկածը» դասել կալանքի պայմանների շարքին, քանի որ առաջինն արդեն իսկ ենթադրում է անձի իրավունքների ավելի բարձր երաշխիքի նախատեսում, որն էլ պետք է հիմք ընդունվի կալանքի իրավաչափության հարցը քննարկելիս: Նման պայմաններում անհասկանալի է Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան այն առումով, որ կալանքի իրավաչափության հարցը քննարկելիս տարբերակված մոտեցում չի ցուցաբերվում այն երկրների նկատմամբ, որոնք հիմնավոր կասկածից բարձր չափանիշ են նախատեսում: Արդյունքում, այն դեպքերում, երբ առկա լինի հիմնավոր կասկած, որը, սակայն, չբավարարի «հիմնավոր հիմքեր» և նմանաբովանդակ այլ ավելի բարձր չափանիշներին, կալանքը պետք է որակվի որպես անօրինական:

Տեսական և գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում կալանքի պայման հանդիսացող կասկածի բովանդակային տարրերի և դրանց հիմնավորվածության (ապացուցվածության) գնահատման աստիճանի խնդիրը:

Մասնավորապես, առաջին հարցադրումը վերաբերում է նրան, թե կասկածի առկայությունը գնահատելիս պետք է անդրադառնալ միայն դրա փաստակա՞ն, թե՞ նաև իրավական կողմին, այդ թվում՝ արարքի իրավական որակմանը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների

¹ Տե՛ս Michael Ramsden and Cecilia Chung, Reasonable grounds to believe: An unreasonably unclear evidentiary Threshold in the Rome Statute. Journal of International Criminal Justice. July 2015, էջ 9:

² Տե՛ս նույն տեղում, էջեր 14-15:

պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: *Առաջին*՝ առկա՞ են արդյոք կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, *երկրորդ*՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնո՞ւմ է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին¹: Այսինքն՝ «Հ իրավակիրառ պրակտիկան որպես հիմնավոր կասկածի բովանդակային տարրեր առանձնացնում է դրա թե՛ փաստական, թե՛ իրավական կողմերը՝ տարբերակելով դրանց գնահատման աստիճանները:

Նշենք, որ նմանաբովանդակ դիրքորոշում է ձևավորված նաև Եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, վերջինս մի շարք որոշումներում ընդգծել է, որ բացի փաստական կողմից հիմնավոր կասկածի առկայությունը պահանջում է նաև՝ փաստերը ողջամտորեն դիտարկվեն հանցավոր վարքագիծ ներպետական օրենսդրության համաձայն²:

Վերոհիշյալի համատեքստում հետաքրքրական է նաև Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ³: Արդյունքում ստացվում է, որ կալանքի պայման հանդիսացող կասկածի առկայությունը գնահատելիս դատարանը մի կողմից պարտավոր է որոշակի աստիճանով անդրադառնալ անձին վերագրվող արարքի փաստական և իրավական նկարագրության գնահատմանը, իսկ մյուս կողմից՝ պետք է զերծ մնա մեղադրանքի էությանը անդրադառնալուց: Եթե հաշվի առնենք, որ մեղադրանքի առկայությունը կալանքի պայմաններից է, ապա պետք է արձանագրենք, որ առնվազն անհրականանալի խնդիրներ են դրված կալանքի իրավաչափությունը գնահատող դատարանի առջև, քանի որ անձին վերագրված արարքի փաստական և իրավական նկարագիրը տրվում է նրան առաջադրված մեղադրանքում:

«Ետաքրքրական է, որ մեղադրանքի իրավաչափությանն անդրադառնալու անթույլատրելիության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Բուլղարիայի Գերագույն դատարանը, որի կապակցությամբ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում է արձանագրել: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Բուլղարիայի նախադեպային իրավունքի համաձայն՝ մեղադրանքի հիմնավորվածության, հետևաբար արարքի քրեաիրավական որակման հարցերը դատախազի լիազորության սահմաններում են, իսկ ներպետական դատարանները, հետևելով դրան, սահմանափակվել են միայն «ծանր դիտավորյալ հանցագործության» մեղադրանք առաջադրված լինելու փաստի արձանագրմամբ⁴:

Ավելին՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինս հիմնավոր կասկածի գնահատման շրջանակնե-

¹ Տե՛ս Հարություն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի ՏՂ2/0009/06/11 որոշման 13-րդ և 15-րդ կետերը:

² Տե՛ս Kandzhov v. Bulgaria գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ 68294/01, կետ 57, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ 23978/06, կետ 136:

³ Տե՛ս Հարություն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշման 13-րդ և 15-րդ կետերը, Էդգար Եղիազարյանի վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 14-15-րդ կետերը:

⁴ Տե՛ս Nikolova v. Bulgaria գործով 1999 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 31195/96, կետեր 59-61:

րում անդրադառնում է անգամ մեղադրանքի ձևակերպմանը: Մասնավորապես, մի շարք որոշումներում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձին առաջադրված մեղադրանքի ձևակերպումը չի համապատասխանում նման բնույթի փաստաթղթերին բնորոշ համաձայնեցվածությանը, կարգին և հստակությանը ներկայացվող աստիճանին. դրա բնորոշումը բաղկացած է մեկ տպագիր էջ կազմող մեկ նախադասությունից¹:

Վերոհիշյալից ելնելով՝ կարծում ենք, որ կալանքի պայման հանդիսացող կասկածը գնահատելիս *մեղադրանքի էությունը* անդրադառնալու բացարձակ արգելքի սահմանումը արդարացված չէ այնպիսի պայմաններում, երբ գործը Եվրոպական դատարան հասնելու դեպքում վերջինս ազատ է այդ հարցերը գնահատելու իր հայեցողությամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ վերջին դիրքորոշումը չի ենթադրում մեղադրանքի բոլոր տարրերը գնահատելու հնարավորություն, քանի որ անձի մեղավորության հարցը, ինչպես իրավացիորեն շեշտել է Վճռաբեկ դատարանը, չի կարող և չպետք է գնահատման ենթարկվի նախնական դատական վերահսկողության շրջանակներում, քանի որ դրա որոշումը իրականացվում է արդարադատության գործառնության շրջանակներում: Մինչդեռ մեղադրանքի մնացած բաղկացուցիչ տարրերը, որոնք բնութագրում են հանցագործության օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, պետք է գնահատման ենթարկվեն դատարանի կողմից կալանքի միջնորդության քննության շրջանակներում: Ինչ վերաբերում է սուբյեկտիվ կողմի լրացուցիչ պարտադիր տարրերի (շարժառիթ, նպատակ, դրդումներ, հույզեր) գնահատմանը, ապա այս հարցի կապակցությամբ տեսությունում միասնական մոտեցում չկա: Տեսական աղբյուրներում հիմնականում նշվում է հանցանքի օբյեկտիվ կողմի առկայության և դրան անձի առնչության հարցերը քննարկելու անհրաժեշտության մասին: Սակայն որոշ աղբյուրներում նշվում է նաև համապատասխան իրավիճակներում անձին վերագրվող հանցանքի սուբյեկտիվ կողմի հատկանիշները հիմնավորելու՝ մեղադրանքի կողմի պարտականության մասին²:

«Վերականգնողական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վճռաբեկ դատարանը, ըստ էության, ընդունելի է համարում սուբյեկտիվ կողմի հիշյալ հատկանիշների գնահատումը: Մասնավորապես, 2017 թվականի երկու որոշումներով, որոնք վերաբերում են նույն քրեական գործով տարբեր մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուն, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վերաքննիչ դատարանի եզրահանգումների այն մասին, որ մեղադրյալներին վերագրվող ավագակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը՝ շահադիտական շարժառիթի առկայության վերաբերյալ հիմնավոր կասկածը, չի հաստատվում: Ուստի Վճռաբեկ դատարանը գտել է, որ տուժողների և մեղադրյալների ցուցմունքներում առկա որոշակի հակասությունը չի կարող դիտվել որպես վերջիններիս վերագրված արարքում շահադիտական շարժառիթի առերևույթ բացակայության մասին վկայող համեմատաբար ակնհայտ փաստ³: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել ոչ թե սուբյեկտիվ կողմի հիշյալ հատկանիշի առկայությանը ստորադաս դատարանի անդրադառնալը, այլ դրա գնահատման աստիճանը:

¹ Տե՛ս Rasul Jafarov v. Azerbaijan գործով 2016 թվականի մարտի 17–ի վճիռը, գանգատ թիվ 69981/14, կետ 121:

² Տե՛ս **Рудич В.В.** Реализация международно-правового стандарта обоснованности подозрения при избрании судом меры пресечения в виде заключения под стражу // Вестн. Том. гос. ун-та. Право. 2017. №25. URL: <https://cyberleninka.ru/article/n/realizatsiya-mezhdunarodno-pravovogo-standarta-obosnovannosti-podozreniya-pri-izbranii-sudom-meryi-presecheniya-v-vidе-zaklyucheniya>:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբերի 15-ի Ֆեդոր Բոլդիրևի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0024/06/17 և Ալեքսեյ Գրինչուկի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0025/06/17 որոշումները:

Կարծում ենք, որ հանցանքի սուբյեկտիվ կողմի լրացուցիչ պարտադիր հատկանիշների առկայության հարցի քննարկումը չպետք է դուրս մնա դատական վերահսկողության շրջանակներից, քանի որ կոնկրետ իրավիճակներում դրանց բացակայությունը կարող է հանգեցնել տվյալ հանցակազմի բացակայության: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ այն դեպքում, երբ արարքի կատարման պահին այն հանցավոր չի համարվել, ապա հիմնավոր կասկածը անշուշտ բացակայում է¹:

Վերոհիշյալի համատեքստում նշենք, որ միակարծիք ենք ինչպես տեսաբանների, այնպես էլ Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշմանը, որ կալանքի պայման կասկածի գնահատման շրջանակներում դատարանն իրավասու չէ անդրադառնալու մեղադրանքի հիմնավորվածության հարցերին²: Դատարանն օբյեկտիվորեն չի էլ կարող գնահատման ենթարկել մեղադրանքի հիմնավորվածությունը, այն է՝ դրա հիմքում դրված ապացույցների բավարարությունը, քանի որ չի տիրապետում հիշյալ ապացույցների այն ծավալին, որն առկա է գործի նյութերում: Դատարանի բոլոր դատողությունները հանցանք կատարած լինելու կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ կատարվում են կողմերի ներկայացրած սահմանափակ նյութերի շրջանակներում, հետևաբար դրանք ինքնին չեն կարող հանգեցնել մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու փաստերի հաստատմանը: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է հստակ տարբերակել կասկածի հիմքերի հիմնավորվածության և մեղադրանքի հիմնավորվածության գնահատման իրավիճակները:

Կալանքի պայման հանդիսացող կասկածի տարրերի կազմի որոշումից հետո անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրանց հիմնավորվածության աստիճանի գնահատման հետ կապված հարցերին: Վերջիններս համընդհանուր հետաքրքրություն ունեցող խնդիրներ են, որոնց մշտապես անդրադարձ է կատարվել թե՛ տարբեր երկրների տեսաբանների կողմից, թե՛ իրավակիրառ պրակտիկայում:

Մասնավորապես, ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ կասկածի բարեխղճությունը բավարար չէ հիմնավոր պատճառի առկայության համար: Վերջինս պետք է հիմնված լինի փաստերի վրա, որոնք էլ այն կդարձնեն հիմնավոր³: Հավանական պատճառի հետ առնչվելիս գործ ունենք հավանականությունների հետ: Դրանք տեխնիկական չեն, դրանք առօրյա կյանքի փաստական և գործնական պատկերացումներ են, որոնցով առաջնորդվում է ողջամիտ և խելամիտ անձը, որն իրավաբան չէ⁴: Հավանական պատճառի չափորոշիչը չի կարող փոխարկվել կոնկրետ տոկոսների, քանի որ այն վերաբերում է հավանականություններին և կախված է հանգամանքներից: Գերագույն դատարանը անթույլատրելի է համարել ստորադաս դատարանների կողմից հավանական պատճառի ավելի հստակ չափումներ ներդնելու փորձերը⁵: Մինչդեռ դատավորները, գիտնականները և պրակտիկ աշխատողները տարբեր տեսակետներ ունեն հավանական պատճառի աստիճանի որոշման հարցում: Օրինակ, դատավորների մեծ մասը գտնում է, որ այն հավասար է 30%–60%–ի⁶:

¹ St'u Wloch v. Poland գործով 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 27785/95, կետ 109, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06, կետ 136:

² St'u Рудич В.В. նշված աշխատությունը, URL: <https://cyberleninka.ru/article/n/realizatsiya-mezhdunarodno-pravovogo-standarta-obosnovannosti-podozreniya-pri-izbranii-sudom-mery-presecheniya-v-vide-zaklyucheniya>

³ St'u Carroll v. United States, 267 U.S. 132, (1925):

⁴ St'u Brinegar v. United States, 338 U.S. 160, (1949):

⁵ St'u Erica Goldberg, Getting Beyond Intuition in the Probable Cause Inquiry, 17 Lewis & Clark L. Rev. 789, (2013), էջեր 15-16:

⁶ St'u C.M.A. McCauliff, Burdens of Proof: Degrees of Belief, Quanta of Evidence, or Constitutional Guarantees?, 35 VAND. L. REV. 1293 (1982), էջեր 1327-1328:

Միջազգային քրեական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ կալանավորման պայման հանդիսացող կասկածը գնահատելիս այն հիմնվում է Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա: Իսկ վերջինս էլ, իր հերթին, որպես գնահատման չափորոշիչ է նշում «օբյեկտիվ դիտորդի» ընկալումը: Միննույն ժամանակ, Եվրոպական դատարանը փաստել է, որ կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածի անկեղծությունն ու բարեխղճությունը¹, սակայն միայն դրանց վրա հիմնված կասկածը չի կարող բավարար համարվել², իսկ այն, թե ինչպիսի կասկածը կարող է համարվել հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից³:

«Հիրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև տեսությունը նույնպես հիմնվում են Եվրոպական դատարանի կողմից հիմք ընդունվող՝ «օբյեկտիվ դիտորդի» ընկալման չափորոշիչի վրա:

Վերոհիշյալից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ իրավունքում դիտորդի չափանիշները սահմանափակվում են ողջամտության և խոհեմության չափանիշներով, ընդ որում անհրաժեշտ չի համարվում դիտորդի պրոֆեսիոնալիզմը: Վերջինս թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ կալանքի միջնորդության քննարկումները ԱՄՆ-ում կարող են իրականացվել նաև ոչ պրոֆեսիոնալ դատավորների կողմից: Ինչ վերաբերում է մայրցամաքային իրավունքին, ապա այստեղ խոսվում է միայն դիտորդի օբյեկտիվության չափանիշի մասին, ընդ որում որևէ հիշատակում չկա նրա պրոֆեսիոնալիզմի վերաբերյալ:

Այս կապակցությամբ նշենք, որ անձին վերագրվող կասկածի հիմնավորվածության գնահատման տեսանկյունից միայն դիտորդի օբյեկտիվությունը չի կարող բավարար գնահատվել, քանի որ ցանկացած գնահատողական երևույթ ուղղակիորեն կախվածության մեջ է գտնվում նաև գնահատողի սուբյեկտիվ հատկանիշներից: Հետևաբար կարծում ենք, որ դիտորդի օբյեկտիվության հատկանիշի հետ մեկտեղ՝ անհրաժեշտ է հիմք ընդունել նաև նրա ողջամտության չափանիշը: Ինչ վերաբերում է պրոֆեսիոնալիզմի չափանիշին ապա հարկ է նշել, որ անձին վերագրվող փաստական հանգամանքների հիմնավորվածությունը գնահատելիս դրա բացակայությունը խնդիր չի առաջացնում: Սակայն կասկածի իրավաբանական կողմի հիմնավորվածության գնահատման առնչությամբ քննարկվող հարցի պատասխանը նույնքան ակնհայտ չէ: Այն սերտորեն փոխկապակած է այն հարցի հետ, թե ինչ խորությամբ է անհրաժեշտ անդրադարձնալ անձին վերագրված փաստերի իրավական որակման հիմնավորվածությանը:

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից հետևում է, որ հանցակազմի բացակայությունը միանշանակ բացառում է հիմնավոր կասկածի առկայությունը: Ինչ վերաբերում է իրավական որակման ճշտությանը, ապա գանգատն անընդունելի համարելու որոշումներից մեկում Եվրոպական դատարանն անդրադարձել է դիմումատուի փաստարկին այն մասին, որ կալանք ընտրելիս բացակայել է հիմնավոր կասկածը, քանի որ գործի քննության ընթացքում իրեն առաջադրված մեղադրանքը փոփոխվել է: Եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ դիմումատուին վերագրված արարքի իրավական որակման փոփոխությունն *այնքան կտրուկ չի տարբերվում* կալանքի համար ներկայացված կասկածի սկզբնական

¹ Տե՛ս Murray v. The United Kingdom գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 61:

² Տե՛ս Gusinskiy v. Russia գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53:

³ Տե՛ս Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

հիմնավորումներից, որպեսզի կասկածներ հարուցի դրա բարեխղճության կամ հիմնավորվածության առնչությամբ¹:

Այսպիսով, Եվրոպական դատարանը արարքի իրավական որակման տեսանկյունից, ըստ էության, հիմնավոր կասկածի բացակայություն է դիտարկում հանցակազմի բացակայությունը, իսկ կասկածը հիմնավոր չի համարում արարքի այնպիսի իրավական որակման դեպքում, որն այնքան ակնհայտորեն չի համապատասխանում նկարագրված փաստերին, որ հանգեցնում է կասկածի անբարեխղճության:

Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ հանցակազմի բացակայությունը հանգեցնում է հիմնավոր կասկածի բացակայության²: Ինչ վերաբերում է հիմնավոր կասկածի գնահատման շրջանակներում անձին վերագրվող արարքի իրավական որակման հիմնավորվածությանը անդրադարձնալուն Վճռաբեկ դատարանը գտել է, որ «(...) հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմը առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (<< քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ)), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է << քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունը ակնհայտորեն վկայում է զենքի գործադրման բացակայության, բայց միևնույն ժամանակ առերևույթ փաստում << քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին)»³:

Դրական գնահատելով ուռճացված մեղադրանքների դեմ անձի ազատության իրավունքի ապահովման երաշխիք տրամադրելուն ուղղված դատական պրակտիկայի զարգացումը, այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համար նկատել, որ «վճռորոշ նշանակություն կարող են ունենալ» արտահայտությունը լայն գնահատողական բնույթ է կրում և միանշանակորեն չի լուծում ուռճացված մեղադրանքին տրվելիք իրավական գնահատականի հարցը: Կարծում ենք՝ մինչատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի նպատակի և խնդիրների հաշվառմամբ՝ իրավական որակման այնպիսի անհամապատասխանության դեպքում, որը կհանգեցնի կասկածի անբարեխղճության (ուռճացված որակում), կալանքի քննարկվող պայմանը չի կարող հիմնավորված գնահատվել: Հետևաբար ուռճացված մեղադրանքի դեպքում դատարանը պետք է արձանագրի, որ անձին վերագրվող կասկածը հիմնավորված չէ՝ մերժելով համապատասխան միջնորդությունը:

Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված դիրքորոշումներից ակներև է, որ հիմնավոր կասկածի իրավական կողմի հիմնավորվածության վերաբերյալ դատողությունները պետք է հիմնված լինել առերևույթ և ակն-

¹ Տե՛ս Demirel v. Turkey գործով 2009 թվականի մայիսի 5-ի որոշումը, գանգատ թիվ 15588/04:

² Տե՛ս Արամ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 23-րդ և 28-րդ կետերը:

³ Տե՛ս Էդգար Եղիազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը:

հայտ (*prima facie*) հանգամանքների վրա, և կատարվեն նույն մակարդակներում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությամբ զբաղվող որոշ հեղինակներ դիրքորոշում են արտահայտել այն մասին, որ անհրաժեշտ է ոչ միայն հիմնավորել անձի և ենթադրյալ հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձությունների միջև կապը, այլ նաև ներկայացնել բավարար հիմքեր, որ այդ իրադարձությունները համապատասխանում են ենթադրվող հանցագործությանը¹: Ավելին՝ Եվրոպական դատարանի վերջին շրջանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ հանցակազմի առկայության հարցը քննարկելիս Եվրոպական դատարանը հիմնվում է կոնկրետ հանցակազմի վերաբերյալ տվյալ պետությունում ձևավորված պրակտիկայի, դոկտրինայի աղբյուրների վրա և գնահատական տալիս այնպիսի իրավիճակներում, որոնք այնքան էլ առերևույթ ակնհայտ չեն²: Բացի այդ, մի շարք որոշումներում Եվրոպական դատարանը քննարկման է ենթարկել հիմնավոր կասկածի առկայությունն անձին վերագրված կոնկրետ հանցագործության կապակցությամբ³: Հաշվի առնելով, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հնարավորություն չի տալիս հստակ կանխատեսումներ կատարել արարքի իրավական որակման գնահատման աստիճանի խորացման միտումների մասին, կարծում ենք՝ առայժմ հիմնավորված չի լինի պնդել կասկածի գնահատումն իրականացնող դիտորդի պրոֆեսիոնալության չափանիշի նախատեսման անհրաժեշտությունը:

Խոսելով կասկածի գնահատման չափորոշիչների մասին՝ անհրաժեշտ է անդրառնալ նաև դրա հիմնավորվածության/ապացուցվածության աստիճանի որոշման խնդիրն: Մասնավորապես, անհրաժեշտ է անդրադառնալ, թե ինչպիսի չափանիշներով դատարանը պետք է գնահատի իրեն ներկայացված նյութերը, որպեսզի հաստատված համարի կասկածի համապատասխան աստիճանի առկայությունը:

Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վերլուծությունից հետևում է, որ դրանով առանձնացվում է բավարարության չափանիշը: Միևնույն ժամանակ, որպես կալանքի հիմնավորում ներկայացված կոնկրետ նյութերի Եվրոպական դատարանի վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ, ըստ էության, դրանք վերաբերում են համապատասխան նյութի արժանահավատությանը⁴:

ԱՄՆ Գերագույն դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանում նույնպես առանձնացվում են բավարարության (հանգամանքների ամբողջականության թեստ (test of totality-of-the-circumstances)) և արժանահավատության չափանիշները⁵:

Հետաքրքրական են Իտալիայի իրավական կարգավորումները, որոնց համաձայն՝ դատարանը ապացույցները պետք է գնահատի արժանահավատության տե-

¹ St'u Monica Macovei, A guide to the implementation of Article 5 of the European Convention on Human Rights, Council of Europe, 2002, էջ 50:

² St'u Rasul Jafarov v. Azerbaijan գործով 2016 թվականի մարտի 17-ի վճիռը, զանգատ թիվ 69981/14, կետ 114-135, Rashad Hasanov and others v. Azerbaijan գործով 2018 թվականի հունիսի 7-ի վճիռը, զանգատներ թիվ 48653/13, 52464/13, 65597/13, 70019/13, կետեր 97-109:

³ St'ւ, օրինակ, Lukanov v Bulgaria գործով 1997 թվականի մարտի 20-ի վճիռը, զանգատ թիվ 21915/93, կետ 43, Sokolov v. Russia գործով 2017 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 63392/09, կետ 25:

⁴ Labita v. Italy [GC], §§ 156 et seq., Talat Tepe v. Turkey, § 61

⁵ St'u Kit Kinports, Probable Cause and Reasonable Suspicion: Totality Tests or Rigid Rules?, 163 U. PA. L. REV. ONLINE 75 (2014), <http://www.pennlawreview.com/online/163-U-Pa-L-Rev-Online-75.pdf>, էջ 75-76:

սանկյունից, ինչպես նաև իրավասու չէ օգտագործել *օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները*¹:

Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա կարելի է արձանագրել, որ հիմնավոր կասկածի հաստատվածության կապակցությամբ բարձրագույն դատական ատյանն օգտագործում է «բավարար ապացույցներ» և «օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալներ» եզրույթները²: Այսինքն, Վճռաբեկ դատարանի կողմից որպես ներկայացված նյութերի գնահատման չափանիշներ են նշվում դրանք բավարարությունը և *օրենքով սահմանված կարգով ձեռք բերված լինելը (թույլատրելիությունը)*: Չնայած վերջինին՝ դատական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ դատարանները, որպես կանոն, հղում են կատարում բավարարության չափանիշին և ձեռնպահ են մնում օրենքով սահմանված կարգի խախտման վերաբերյալ որևէ վերլուծություն կամ եզրահանգում կատարելուց:

Վերոհիշյալի հաշվառմամբ գտնում ենք, որ կալանքի պայման հանդիսացող կասկածի աստիճանի ապացուցվածության գնահատման առնչությամբ բավարարության չափանիշի առանձնացումն անվիճելի է, հակառակ դեպքում կրթականը կազրկվի թե՛ կասկածի հիմնավորվածությանը ներկայացվող պահանջի, թե՛ դրան կատմամբ դատական վերահսկողություն նախատեսելու երաշխաբային բնույթը: Միևնույն ժամանակ նյութերի բավարարության որոշումն անհնարին կլինի առանց այս կամ այն նյութի վերաբերելիության և արժանահավատության հասկանիչների որոշման: Այսինքն՝ դատարանը պետք է վերլուծի կոնկրետ նյութի վերաբերելիությունը քննարկվող վարույթի առարկային, ինչպես նաև դրա արժանահավատությունը բնութագրող հանգամանքները: Ընդ որում հարկ է ընդգծել, որ դատավարության տվյալ փուլում այս կամ այն նյութի, այդ թվում՝ ապացույցի արժանահավատության գնահատումը դատարանի կողմից իրականացվում է իր տրամադրության տակ եղած նյութերի սահմանափակ ծավալի շրջանակներում և առերևույթության (prima facie) մակարդակում: Հետևաբար դատարանի եզրահանգումները պետք է ձևակերպվեն այդ հաշվառմամբ և չեն կարող իրավաբանական նշանակություն ունենալ կալանքի միջնորդության քննարկման՝ տվյալ դատական վարույթի շրջանակներից դուրս:

Ինչ վերաբերում է նյութերի թույլատրելիության գնահատմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության մոդելի պայմաններում դատարանի կողմից ապացույցի թույլատրելիության որոշումը արդարադատության գործընթացի տարրերից է, իսկ ապացույցի ձեռքբերման գործընթացի օրինականության նկատմամբ մինչդատական վարույթում նախնական դատական վերահսկողություն նախատեսված չէ: Նման պայմաններում կալանքի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է դեկավարվի նյութերի թույլատրելիության կանխավարկածով: Այս կապակցությամբ նշենք, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կողմիտեն որպես ուղենիշ է սահմանել խոշտանգման կամ դաժան, անարդար կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների՝ որպես կալանքի հիմնավորում օգտագործելու անթույլատրելիությունը³: Պետության պարտականությունն է անձի հիմնական իրավունքները և ազատությունները հարգելը, ինչ-

¹ <http://www.ecba.org/extdocserv/projects/JusticeForum/Italy180309.pdf>, էջ 12:

² Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը, Էդգար Եղիազարյանի վերաբերյալ որոշումը և այլն:

³ United Nations General Assembly Report of the Working Group on Arbitrary Detention United Nations Basic Principles and Guidelines on Remedies and Procedures on the Right of Anyone Deprived of Their Liberty to Bring Proceedings Before a Court 6 July 2015, 12-րդ ուղենիշը:

պէս նաև պաշտպանելը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ առերևույթ առկա լինեն նյութի՝ անձի հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված լինելու վերաբերյալ ակնհայտ տվյալներ, դատարանը համապատասխան ձևակերպումներով պետք է արձանագրի տվյալ հանգամանքը և ձեռնպահ մնա նման նյութն օգտագործելուց: Ինչ վերաբերում է նյութի ձեռքբերման գործընթացում օրենքի այլ ակնհայտ խախտումների առերևույթ առկայությանը, ապա դատարանը դրանք կարող է հաշվի առնել դրա արժանահավատությունը գնահատելիս:

Ընդհանրացնելով նշենք, որ մեր համոզմամբ՝ կալանքի միջնորդությունների քննության շրջանակներում որպէս քննարկվող խախտման միջոցի պայման անհրաժեշտ է դիտարկել «հիմնավոր հիմքերի առկայությունը՝ **հավատալու, որ անձը հանցանք է կատարել**»: Վերջինս ենթադրում է «հիմնավոր կասկածից» բարձր կասկածի աստիճան, որը համահավասար է անձին որպէս մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ կասկածին: Հիշյալ պայմանի շրջանակներում դատարանը պետք է անդրադառնա անձին վերագրվող արարքի փաստական կողմի հիմնավորվածությանը, ինչպէս նաև դրան տրված իրավական որակման առերևույթ իրավաչափությանը: Իրավական որակման այնպիսի անհամապատասխանության դեպքում, որը կհանգեցնի կասկածի անբարեխղճության (ուռճացված որակում), կալանքի քննարկվող պայմանը չի կարող հիմնավորված գնահատվել: Կալանքի պայման հանդիսացող կասկածի աստիճանի ապացուցվածության գնահատումը դատարանը պետք է իրականացնի ներկայացված նյութերի բավարարության, վերաբերելիության, արժանահավատության չափանիշներից ելնելով: Դատարանը պետք է ղեկավարվի նյութերի թույլատրելիության կանխավարկածով: Միևնույն ժամանակ բոլոր այն դեպքերում, երբ առերևույթ առկա լինեն նյութի՝ անձի հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված լինելու վերաբերյալ ակնհայտ տվյալներ, դատարանը համապատասխան ձևակերպումներով պետք է արձանագրի տվյալ հանգամանքը և ձեռնպահ մնա նման նյութն օգտագործելուց: Ինչ վերաբերում է նյութի ձեռքբերման գործընթացում օրենքի այլ ակնհայտ խախտումների առերևույթ առկայությանը, ապա դատարանը դրանք կարող է հաշվի առնել դրա արժանահավատությունը գնահատելիս:

SUSPICION OF HAVING COMMITTED AN OFFENCE AS PRECONDITION OF DETENTION: MAIN ISSUES OF EVALUATION IN RA CRIMINAL PROCEDURE

Ani Danielyan

PhD student of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics

Within the framework of this article, the author has analyzed the nature of the suspicion as precondition of detention, issues of defining of its degree, elements, as well as criteria of its justification. The research is held in the context of theoretical approaches, international experience, as well as the case law of the European Court of Human Rights, International Criminal Court, RA Cassation Court as well. As a result of the study, the author has suggested criteria for assessment of the suspicion as the precondition of detention.

ПОДОЗРЕНИЕ В СОВЕРШЕНИИ ПРЕСТУПЛЕНИЯ КАК УСЛОВИЕ ПРИМЕНЕНИЯ ЗАКЛЮЧЕНИЯ ПОД СТРАЖУ: ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ОЦЕНКИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Ани Даниелян

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

В рамках данной работы автор проанализировал сущность подозрения как условия для применения заключения под стражу, вопросы определения его степени, элементов, а также критерии обоснованности. Вышеупомянутый анализ проведен в контексте теоретических подходов, международного опыта, а также прецедентного права Европейского суда по правам человека, Международного уголовного суда, Кассационного суда РА. В результате исследования были предложены соответствующие критерии оценки подозрения при применении заключения под стражу.

Բանալի բառեր– կալանավորման պայման, հիմնավոր կասկած, հիմնավոր հիմքեր հավատարու, քրեական մեղադրանք, դատական վերահսկողության սահմաններ, հիմնավորման չափանիշներ:

Key word- precondition of detention, reasonable suspicion, reasonable grounds to believe, criminal charge, scope of judicial control, criteria of justification.

Ключевые слова - условие задержания под стражу, обоснованное подозрение, обоснованные основания полагать, обвинение, пределы судебного контроля, критерии обоснования.